



**ԱՌՐԴՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Հարցումը պետք է ուղարկվի [aaaa@aaaa.am](mailto:aaaa@aaaa.am) Էլ եկտրոնային հասցեին` **Subject** տողում կատարելով հետևյալ գրառումը. Առևիտորական գործունեության հանձնաժողովին

Անուն և պաշտոն.	
Կազմակերպություն.	
Կոնտակտային տվյալներ.	Էլ . փոստ
Ամսաթիվ.	2021թ. հունիսի 10
Հարցում.	<p>1. Համաձայն ո՞ր ԱՄՍ-ի պետք է իրականացվի Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի 26 հոդվածի պահանջների շրջանակում իրականացվող պարտադիր առևիտը:</p> <p>2. Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի 26 հոդվածի պահանջների շրջանակում իրականացվող պարտադիր առևիտը վերաբերելու է օրենքով սահմանված ամբողջական հաշվետվությանը, թե՞ նրանում ներառված առանձին բաժիններին:</p> <p>3. Ի՞նչ բովանդակություն պետք է ունենա առևիտորական եզրակացությունը:</p>
Լուծման Ձեր տարբերակը՝ ներկայացված հարցի վերաբերյալ և/կամ հղումը համապատասխան ստանդարտներին	

«Հայաստանի առևիտորների և փորձագետների պալատ» հասարակական կազմակերպության առևիտորական գործունեության հանձնաժողովի կողմից առևիտորական ստանդարտների, առևիտորական գործունեության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների և գործնական բնույթի կրթող հարցերի առնչությամբ մշակված մեկնաբանություններն ունեն խորհրդակցական բնույթ, չեն հանդիսանում միակազմի կողմից հաստատված և պարտադիր են հիշատակվող հարցերի համար:



**ԱՌՈՂՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Հանձնաժողովի արձագանք

Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի 26 հոդվածը սահմանում է՝  
**մեջբերում.**

Հոդված 26. Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

1. Եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից ֆինանսավորվել է 10 միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա այդ միջոցների օգտագործման վերաբերյալ Լիազոր մարմնի սահմանած հաշվետվությունը, **որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն**, ենթակա է պարտադիր աուդիտի՝ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն:
2. Աուդիտորի եզրակացությունը սույն հոդվածի 1-ին մասում **նշված հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվության հետ կցվում** է սույն օրենքով սահմանված հաշվետվությանը: **Մեջբերման ավարտ.**

ՊԵԿ նախագահի 20 մայիսի 2020թ. N477-ն հրամանը սահմանում է Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի 24 հոդվածով նախատեսված հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակաման և ներկայացման կարգը (վերոհիշյալ որոշումը խմբագրվել է 16.06.2021թ N 585-ն-որոշմամբ: Խմբագրումը ուժի մեջ է մտել 01.07.2021թ-ից): Խմբագրմամբ հստակեցվել է, որ հասարակական կազմակերպությունների մասին օրենքի 26 հոդվածով նախատեսված հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն է համարվում սահմանված հաշվետվության 7, 9, 11 դաշտերում լրացված տվյալները: Մեջբերում են որոշման 2.1 կետը.

2. 1. Սահմանել, որ սույն հրամանով հաստատված Հավելված N 1-ի **Օրինակելի ձևի 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված հաշվետվական տվյալները համարվում են «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն:** Մեջբերման ավարտ:

Ելնելով վերը շարադրված իրավական ակտերից, հանձնաժողովը կարծում է.

1. Հասարակական կազմակերպությունների մասին օրենքով սահմանված պարտադիր աուդիտը **պետք է իրականացվի ԱՄՍ 800** (Հատուկ նկատառումներ – Հատուկ նպատակի հիմունքների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ) կամ **ԱՄՍ 805-ի** (Հատուկ նկատառումներ – Առանձին ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվության առանձին տարրերի, հաշիվների կամ հոդվածների աուդիտ) շրջանակներում:
2. Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի 26 հոդվածի պահանջների շրջանակում իրականացվող պարտադիր աուդիտի ենթակա է հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը, որը համաձայն 20 մայիսի 2020թ. N 477-ն հրամանի 2.1 կետի հանդիսանում է նույն հրամանով սահմանված ՊԵԿ ներկայացվող հաշվետվության **7, 9, 11 դաշտերում լրացված տվյալները:**

«Հայ աստակի աուդիտորների և փորձագետների վապստների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտորական գործունեության հանձնաժողովի կողմից  
 աուդիտորական ստանդարտների, աուդիտորական գործունեության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների և գործնական բնույթի կրող հարցերի  
 առնչ ու թյամբ մշակված մեկնաբանություններն ու նեն խորհրդատվական բնույթի, չեն հանդիսանում միայն կամ դրամադրմանների պատճանակներ հիրթորոշումը:  
 Հանձնաժողովը որևէ պաշտոնական աուդիտոր ու չի կրում մշակված մեկնաբանություններն ու արտահայտված դիրքորոշումներն և կարծիքների համար:



### ԱՌՐԴՔՆՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

3. Հանձնաժողովի կարծիքով Առուիտի եզրակացությունը պետք է ներառի հետևյալ պարբերությունը.

Մենք առուիտի ենք ենթարկել xxxxx ՀԿ-ի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ՀԿ-ների մասին օրենքի 24 հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները, ինչպես նաև հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը: